

ՉՕՐ. ԱՆԴՐԱՆԻԿ ԿԸ ԽՕՄԻ

(2)



Ա.

1908 ին թուրքերը կեղծ սահմանադրութիւն մը հռչակելով յաջողեցան խաբել Եւրոպան եւ որսալ լեղափոխականները:

Իբրեւ «իտէալիստ յեղափոխական» հռչակուած մարդիկ աշխարհի չորս անկիւններէն թափուեցան Պօլիս, համբուրուեցան ոճրագործներու հետ, ընկեր դարձան անոնց, մոռնալով մեր հարիւր հազարաւոր զոհերը: Բեմերէն պոռացին թէ իրենք այլեւս «Օսմանցիներ» են:

«Սահմանադրութեան» հռչակման առաջին օրերուն տեսայ Մալումեանը (Ակնուճի), որ Գուլհարիա կը զտնուէր, Ռ. Չարդարեանը եւ Վահագնը, որ ետքէն կիլիկիոյ մէջ կախաղան հանուեցաւ: Շատ խընդրեցի իրենցմէ որ չերթան Պօլիս, ըսի թէ թուրքերը մեծ թակարդ մը կը լարեն զիրենք մէջը ձգելու համար: Զլսեցին ու զացին:

Անկէ ետք սկսաւ կոիւ մը թըրքական խորհրդարանի աթոռները խլելու համար: Քանի մը վարժապետներ, որոնք ամիսը երկու ոսկի առնելով պիտի զոհանային, ստացան 30 ոսկի ամսական: Թոքաթլեանի, կամ կղզիներու մէջ կերուխուճներ սարքուեցան «ընկեր» թալէաթներու եւ «ընկեր» ինժեներներու հետ, որոնց բացին ինչ զաղտնիք որ ունէին:

Ատանայի ջարդէն մօտ 30 օր առաջ կեղծ անցադրով մը Պօլիս հանդիպեցայ, Ակնուճի, Վարդգէս, Չարդարեան եւ Դաշնակցութեան շէֆերէն զեռ ուրիշներ ամբողջ հինգ ժամ ուղեցին զիս համոզել թէ ժէժօն թիւրքերը այլեւս թոյլ չեն տար ոչ մէկ կոտորած: Ես հակառակը կը պնդէի եւ կ'ըսէի:

— Չեմ հաւատար. այս գազան-
ները մեզ դարձեալ կը կոտորեն. ը-
րածնին դարձեալ կեղծիք է. դուք
կը խարուիք եւ կը խարէք մեր ժո-
ղովուրդը: Ինքնապաշտպանութեան
գաղափարը՝ երբէք մի՛ լքանէք եւ
պատրաստեցէք ժողովուրդն ալ այդ
ուղղութեամբ: Տիգրանակերտէն ըս-
կսելով մինչեւ Պարսից սահմանա-
դուիսը 160 հազար զինուած քիւրտ
կայ: Ժէօն-Թիւրքերը զինաթափ չեն
ըներ զանոնք եւ կը պահեն մեզ
յարմար առթիւ կոտորել տալու հա-
մար:

Մալումեան այն ատեն գարձաւ
ու ինձ ըսաւ.

— Ի՞նչ յոռետես մարդ ես դուն.
երբէք չտեսայ որ քիչ մըն ալ լա-
ւատես ըլլալիր:

Նոյն պահուն վարդգէս ինձ
կ'առաջարկէր որ ծանօթանամ Ալի
բաշայի հետ, որ այն միջոցին ոս-
տիկանութեան տնօրէնն էր Կ. Պօլ-
սոյ մէջ:

Հարցուցի փնտոեցի եւ հասկցայ
թէ՛ այս այն Ալի բաշան է, որ Սա-
սունի Տալուրիկի «Ջրօսանք» թաղի
բնակչութիւնը կոտորել տուաւ եկե-
ղեցիին մէջ եւ յետոյ այրել տուաւ
զայն: Ալի բաշան ինձ դէմ կոռւած
էր երեք անգամ: Հիմա կ'ուզէին որ
իմ ձեռքս դնեմ անոր արիւնոս
ձեռքերուն մէջ եւ ըսեմ. «Երէկ կը-
ռիւ կ'ընէինք, այսօր ընկեր ըլլանք:»

Իմ սովորական գայրոյթովս պա-
տասխանեցի այս բոլորին եւ ըսի.

— Խերը տեսնաք. բայց զո՞նէ
ժողովուրդը մի՛ խարէք:

Եւ «մնաք բարով» ըսելով մեկ-
նեցաւ Եգիպտոս:

Ա՛յ օր չէր անցած, երբ իմացայ
թէ՛ թալէաթ եւ իր նմանները կո-
տորել կուտան Ատանայի Հայու-
թիւնը:


Այն ատեն բուռն ոճով նամակ
մը գրեցի Ակնուհիին, ըսելով թէ ո՞վ
իրաւունք ունէր, ե՞ս իմ յոռետեսու-
թեամբս, թէ ինք՝ լաւատեսութեամ-
բը. «Լաւ զիտցէք որ, աւելցուցի,
երբ առիթը զտնեն ընկեր թալէաթ-
ներ ձեզ ալ կոտորել պիտի տան:»

Այս տողերը գրելու ատենս եր-
բէք միտքէս չէի կրնար անցընել
թէ Դաշնակցութիւնը նոյն միջո-
ցին Մերանիկի մէջ համաձայնու-
թիւն մը կը կնքէր Իթիթիհատի հետ:

Անկէ ետք, այլեւս Դաշնակցու-
թիւնը չափ ու սահման չը ճանչ-
ցաւ: Պայքարը սկսաւ Պատրիար-
քարանի իրաւունքներուն դէմ երես-
փոխանական բնորութիւններու առ-
թիւ. եկեղեցիին ու կղերին դէմ
«բաց ու զօցի» վէճերով. հայ ըն-
տանեկան սրբութեան դէմ «Ազատ
սէր» քարոզելով. հայ տնտեսու-
թեան դէմ, «պուրժուաները» հալա-
ծելով:

Դաշնակցութեան պերճախօս ե-
րեսփոխանները արդէն քրիստոնէից
զինւորագրութիւնը ընդունել տա-
լով ասպացուցած էին թէ «հաւատա-
րիմ օսմանցիներ» են:

Կ. Պօլիսէն յարձակուած ազդա-
նշան մը տրուեցաւ «Չարիզմ»ի դէմ:



Le 25.08.2017

WAN

©Western Armenia News